# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Արջուտ, 093 19 91 34 arjutigyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 50-Ա

### ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի 2021 թվականի բյուջեի բաժին 4, խումբ 5, դաս 1, 4239 հոդվածով նախատեսված միջոցներից հինգ հարյուր հազար դրամ 2-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ, բաժին 5, խումբ 2, դաս 1, 4251 հոդվածով նախատեսված միջոցներից ութ հարյուր հազար դրամ 4-րդ եռամսյակից տեղափոխել 2-րդ եռամսյակ, բաժին 1, խումբ 1, դաս 1, 4237 հոդվածից երեք հարյուր հազար դրամ 2-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ, 4252 հոդվածից՝ երեք հարյուր հազար դրամ 4-րդ եռամսյակից տեղափոխել 2-րդ եռամսյակ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

08.06.2021թ. թիվ 51-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածին, համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի թիվ 01-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Որոշում եմ՝

Բավարարել համայնքի հետևյալ բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն.

1. Պողոսյան Աշոտ – 50 000 դրամ, սոց. ծգնություն
2. Օսյակինա Մարինե – 50 000 դրամ /շրջանավարտ/
3. Հարությունյան Մարտ – 50 000 դրամ /շրջանավարտ/

Ընդամենը – 150 000 դրամ:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ